

ՀԱՅՆՐԻՔ ՏԻՐԱՅՈՒՆԵՐ. «ՀԱՅԱՍՏԱՆ. 1915 թ.»

Շատերն են գրել հայոց Մեծ եղեռնի մասին: Սակայն Հայնրիխ Ֆիրբյուխերի «Ի՞նչ էր թաքցնում կայզերական կառավարությունը գերմանաֆատակներից: Հայաստան 1915: Քաղաքակիրթ ժողովրդի ոչնչացումը Թուրքիայի կողմից» գիրքը, որը գրված է մեծ սրտացավությամբ և ճարտասանական փայլուն ոճով, իր առանձնահատուկ տեղն է գրավում:

1915—1918 թթ. լինելով Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար, Թուրքիայի 5-րդ բանակի սպա, բանակային կորպուսի հրամանատար Լիման Ֆոն Սանդերսի անձնական թարգմանիչը, Ֆիրբյուխերը ականատես է եղել հայոց ցեղասպանությանը: Մեծ հումանիստ, բռնության թշնամի, բարոյական բարձր հատկանիշների տեր Ֆիրբյուխերը իր պարտքն է համարել աշխարհին ներկայացնել հայ ժողովրդի ցեղասպանության՝ համաշխարհային պատմության մեջ «կազմակերպված ամենամեծ սպանի» (Պաուլ Բորբախ) մասին, բանալի խաբվածների աչքերը, որովհետև քաջ գիտակցում էր, որ «հին մոլորությունների և հանցագործությունների անտեսման մեջ թաքցված են գալիք աղետների սաղմերը»:

Այս գրքում, որը Գերմանիայում առաջին անգամ լույս է տեսել 1990 թ., իսկ հետագայում վերահրատարակվել ևս երկու անգամ, Ֆիրբյուխերը անհերքելի փաստերով ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանությունը կազմակերպված էր պետական մակարդակով, և որ հայկական եղեռնի ամիջական կազմակերպիչն ու իրագործողը երիտթուրքական կառավարությունն է, իսկ կայզերական Գերմանիան՝ նրա հանցակիցը: Այսպիսով այն լուրջ մեղադրանք է ժամանակակից Թուրքիայի՝ պատմության կեղծարարների և Արևմտուքի նրանց գրչակիցների հասցեին, որոնք փորձում են ապացուցել, թե ոչ մի հայկական ցեղասպանություն չի եղել:

Գրքի 25 գլուխները ճշմարտացիորեն նկարագրում են հայ ժողովրդի Գողգոթայի սարսափելի պատկերները: Ներածական գլխում, որը կոչվում է «Գերեզմանախաչ», Ֆիրբյուխերը գրում է. «Ո՞վ գիտե հայ ժողովրդի ճակատագրի մասին, որը անվաջարովեց և խաչվեց համաշխարհային պատերազմի ժամանակ...»

Լեռը, որի զագաթից թռել է Նոյի աղավնին, որպեսզի լուր բերի վերածնված կյանքի մասին, «մեծ դարում» շրջապատված է եղել մահվան ստվերով: Նրա բարձունքներն են հասել մեռնող ժողովրդի բազամիլիոն հեծեծանքը և փտող մարմինների գաղջահոտությունը: Ապագա գրողներին և պատմագիրներին Արարատը մի օր զոհանդամ է նրևալու, որի ստորոտում մեր քարքարոս խելագար ժամանակը զոհ է մատուցել, որի համեմատությամբ նսեմանում են թոլոր արյունալի չարագործությունները... Մարդկությունը, որը խոստովանել է իր խայտառակությունը և գիտակցել քավության իր պարտքը, Կովկասի խայտառակության սպին պետք է դարձնի հուշատեղի ողջ աշխարհի համար, որովհետև այստեղ կատարվել է բոլոր սպանություններից ամենազազրելին»:

Ներածական գլուխը հումանիստ Ֆիրբյուխերը եզրափակում է հետևյալ խոսքերով. «Եթե ուզում ենք մեր մեջ պահել սիրելու կարողությունը, մենք պետք է ատենք այն հրեշավոր զագանությունները, որոնք կատարվեցին մեր շուրջը: Ուրեմն թող այս գիրքը մի փոքր ներդրում լինի այդ գործում, որպես մի աննշան խաչ Կովկասյան լեռներում ընդհանուր գերեզմանի վրա»:

Բնութագրելով թուրքերին, նա նկատում է, որ ոճրագործությունը ներհատուկ է նրանց էությանը: «Թուրքիայի պատմությունից» գլխում նա գրում է. «Մեկ միլիոնից ավելի հայերի ոչնչացումը կարելի է հասկանալ թուրքական կայսրության պատմության զարգացման վրա հայացք գցելով: Պատմության այդ շրջանը իր սարսափներով ու ոճիրներով գերազանցում է համաշխարհային պատմության ցանկացած շրջան... Բռնություն, բռնություն և դարձյալ բռնություն. ահա թուրքական պատմության խորհրդանշանը... 200 մեծ վեզիրներից 78-ը մահացել են անքնական մահով: Բոլոր սուլթանների մեկ երրորդը սպանվել է... Մահմեդ 8-րդը (1595—1608) իր գահի առջև բուրգ էր կառուցել իր 17 եղբայրների գանգերից... Ի սկզբնապես անընդունակ լինելով բարոյական որևէ նվաճման, թուրքերը միայն սրով են վաստակել: Ամեն ժողովուրդ ունեցել է իր թագակիր տականքը, բայց օսմանցիներինը խելագարների, ոճրագործների և անատակների մի ամբողջ շարք է: Երիտթուրքերը ամեն ինչով

ժառանգորդն են հին թուրքերի... Սակայն թուրքական պատմության բոլոր զազանությունների համեմատությամբ Արևմտահայաստանում 1915 թ. իրագործված զանգվածային կոտորածը զազաթեմակետ է»:

Այս վանդալիզմը հասկանալի դարձնելու համար Ֆիրքյուխերը շարունակում է. «Թուրք յողովորդը անկիրթ ժողովուրդ է բառիս լայն իմաստով: Նրա լեզուն նեգրական իդոմի մակարդակի է, փոխարենը դա անճամա լեզու է նորակոչիկի խստավարժության համար: Գրականության մասին խոսք անգամ չի կարող լինել: Այն, ինչ արված է այդ ասպարեզում, մասամբ կասկածելի ընդօրինակում է պարսից և արաբական գրականությունից: Թուրքերը երբեք չեն ունեցել սեփական ճարտարապետություն: Նրանք ուղղակի կործանել են այն, ինչ մնացել է անցյալ ժամանակներից: Գիտությունը թուրքական հողում տեղ չունի: Թուրքն ընդունակ է միայն նմանակելու, այն էլ միայն ամենամակերեսային եղանակով: Նա չի կարող լինել իսկական ստեղծագործող ոչ մի հոգևոր բնագավառում: Դրա փոխարեն թուրքերը վարպետ են վարելու պատերազմներ, պատերազմներ և կրկին պատերազմներ: Պատերազմների քանակով Թուրքիան երկրագնդի վրա նվաճել է առաջնության դասիցին: Էֆենդիները եռանդազին էին գործում այնտեղ, ուր կշեռքի նժարի վրա դրվում էին բռունցքը, սարսափը, կործանելու ծարավը և ոչ թե խեղճն ու գաղափարները: Ամոթ Գերմանիային, որ դարձել է եվրոպաձև խուզված ոճրագործների հրոսակախմբի դաշնակիցը, որոնք հենց առիթի էին սպասում, որպեսզի իրագործեն համաշխարհային պատմության մեջ ամենամեծ կողոպուտն ու զանգվածային սպանությունը»:

Խարազանելով գերմանական իշխանություններին, Ֆիրքյուխերը ուղղակիորեն ընդգծում է, որ նրանք նույնպես պատասխանատու են պատմության դատաստանի առաջ, քանի որ նրանք էին բռնել վարագույլը, որի ետևում մորթում էին միլիոնավոր անմեղ տղամարդկանց, կանանց, երեխաների:

«Թուրքական իմպերիալիզմ» գլխում բերված է Արևելքի առաքելության նախագահ դոկտոր Լեփսիուսի գրույցը Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշայի հետ: Լեփսիուսը արտահայտելով իր վրդովմունքը հայկական հալածանքների կապակցությամբ, փորձում է ազդել Էնվեր փաշայի վրա, ասելով՝ «Հայերը երկրի ստամոքսն են: Դուք հիմա կտրում եք ստամոքսը և կարծում եք, թե մյուս մասերը՝ թուրքմենները, քրդերը, լազերը և չերքեզները կարող են ստանձնել նրանց դերը: Դա մոլորություն է»: «Էնվերը լկտի ծպիտով պատասխանում է. «Թերևս պատերազմից հետո մի քանի տարի մեր ստամոքսը թույլ կլինի: Մենք կհանգստանանք: Տեսեք, թուրք ժողովուրդը 40 միլիոն է: Երբ նրանք միանան մեկ պետության մեջ, այնժամ Ասիայում մենք նույն դերը կկատարենք, ինչ Գերմանիան Եվրոպայի մեջ»: Հիշեցնելով Յ. Լեփսիուսի 1915 թ. հունիսին կայացած այս հանդիպումը դահճի հետ, հեղինակն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ թուրքերը օսմանյան կայսրության մեջ 9 միլիոն են, իսկ մնացած 31 միլիոնը Ասիայով մեկ սփռված իրքախոս ցեղեր են:

Գրքի եզրափակիչ՝ «Խաբված ժողովուրդ» գլխում Ֆիրքյուխերը ցույց է տալիս, թե ինչպես և ինչու մեծ տերությունները խաբեցին ու լքեցին հայ ժողովրդին: Նրա համոզմամբ հայկական հարցը Ազգերի լիգայի ամենամեծ խայտառակությունն է: Եվրոպացիների ռազմության բազում չարագործություններ գործած Քեմալը Լոզանում կարողացավ ստանալ այնպիսի հաշտության պայմանագիր, որով, ըստ էության, արդարացվեցին նրա բոլոր գալանությունները:

Հ. Ֆիրքյուխերը այս փոքրածավալ, սակայն խիստ արժեքավոր գրքով զգոնության կոչ է անում համայն մարդկությանը:

Վերջում նշենք, որ Հ. Ֆիրքյուխերի «Հայաստան 1915 թ.» գիրքը Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ 1991 թ. լույս տեսավ ռուսերեն: Այն անմիջապես լայն արձագանք գտավ հասարակության շրջաններում: Գրվեցին դրվատական գրախոսականներ*:

Դժբախտաբար մեր ժողովրդի եղեռնական ժամանակաշրջանին նվիրված այս բարձրարժեք գիրքը դեռ թարգմանված չէ հայերեն: Ուստի հայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնում ենք գրքից երկու՝ «Սատանայի կիրճը» և «Խաբված ժողովուրդ» գլուխները:

Վ. Գ. ՄԻՆԱԿՅԱՆ

* Տե՛ս օրինակ՝ Ք. Ք. Багдасарьян. «Республика Армения», 19 марта 1991, Ա. Մադոյան, «Ազատամարտ», մայիս 29, 1991:

ՍԱՏԱՆԱՅԻ ԿԻՐՃԸ

Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներից տեղահանված հայերին Եփրատի հովտով քշեցին մինչև Քեմախի կիրճը: Դա մի շատ խորը, գառնիվայր լեռնանցք է, որտեղ գետը վեր է ածվում հորձանուտի: Այն, ինչ այստեղ կատարվեց հազարավոր հայերի հետ, աներևակայելի դաժանության և գազանության այնպիսի պատկեր է ներկայացնում, որ թվում է, թե հազարամյակների խելագարությունը մի անգամ ևս կենտրոնացել է այստեղ, որպեսզի հաղթակա-նորեն գոռա հունիսյան արևի դեմ. թե ողջ քաղաքակրթությունը ընդամենը քող է, որը ամեն օր կարող է պատռվել երկոտանի հրեշի բիրտությամբ:

Գրող Ֆ. Ռ. Նորդը իր «Անուշ» վեպում (Շտուտգարտի գերմանական հրատարակչություն) տվել է Քեմախի կիրճում կատարված գազանությունների պատկերը, որը ավելի շատ կարելի է համարել գրողի՝ չափազանցության հասնող խելագար երևակայության ծնունդ, քան իրական դեպքերի նկարագրու-թյուն:

Է. Ա. Պոի և Է. Տ. Ա. Հոֆմանի նկարագրած սարսափները դժգունում են 1915 թվին Վիլհելմ 2-րդի դաշնակիցների կատարածի համեմատությամբ:

Հունիսի 8-ին, 9-ին և 10-ին հայերի խմբերը թողեցին Երզնկա քաղաքը գինվորական պահակախմբի ուղեկցությամբ, որը պետք է ապահովեր բազմաթիվ մարդկանց ու հարյուրավոր սայլերի տեղափոխության անվտանգու-թյունը: Նրանք գնում էին Քեմախ՝ հաջորդ գավառաքաղաքը: Եփրատի հովտով տարվող հարյուրհազարավոր հայերից միայն շատ փոքր մասը հասավ նշանակման վայրը: Կիրճում անզեն մարդկանց վրա հարձակվեցին գինվոր-ներն ու վրա հասած արյունարբու քրդերը, թալանեցին և հետո, արյան մոլուցքով բռնկված, մորթեցին նրանց: Մորթող ճիվաղները վայրենի աղաղակ-ներով բացատարած անդունդն էին շարտում կիսամեռ մարդկանց և դիակներ, որոնցից նեֆեում կույտեր էին առաջանում: Զախչախված մարդկային մարմնի մասերի շառաշյունը արձագանքում էր ժայռերի մեջ, խառնվելով վերևում հոգեվարքի մեջ թավալվող զոհերի խելակորույս հեծեծանքներին: Տղամարդ-կանց և կանանց աչքերի առաջ անդամահատում և կտոր-կտոր էին անում նրանց երեխաներին ու հարազատներին, նրանց արնաշաղախ մարմինները օարդում էին խփելով ժայռի սուր ելուստներին: Այս դժոխային տեսիլքից խելագարված մայրերը իրենց երեխաների ու ամուսինների հետևից նետվում էին մահվան անդունդը: Հուսահատության հասած մարդկային էակները ծնկի էին գալիս արնաթաթախ ճիվաղների առաջ և պաղատում արագ սպանել իրենց: Ուրիշները խնդրում էին կարեկցել կամ իրենք էին շարտում իրենց երեխա-ներին գետը, որի առափնյա ելուստներում դիակների կույտից արգելապատ էր առաջացել: Մեռած մարմինները շրմփոցով ընկնում էին արագ հոսող ալիքների վրա: Եվ այս սաստանայական գործը տևեց ոչ թե մեկ կամ երկու ժամ, այլ երեք օր շարունակ: Ժամերով շարունակվում էր խեղդամահ անելն ու մորթելը: Արյան շիթերը ծուլորեն հոսում էին ժայռերից ներքև և խառնվում ալեկոծված ալիքներին: Երեք օր շարունակ... Եվ արևը շխավարեց, և սար-սափի փոթորիկ շանցավ Ստամբուլի այգիների շքեղ սեղանների վրայով, որոնց մոտ նստած գերմանացի և թուրք դաշնակիցները խմում էին իրար կենաց, այդ սեղանների մոտ նստած գերմանացի քաղցեհիների երևակայության մեջ արևելյան կախարդական պատկերներ էին հառնում, մորթվող երեխաների մահվան ոչ մի ճիշ չսթափեցրեց նրանց գինարբուժային կեղծ երազանքներից: Մի՞թե գիշերային ոչ մի ձայն չհուշեց գերմանացի պետական գործիչներից

որևէ մեկին, որպեսզի Բոսֆորի իր գործընկերների ականջին գոռա, թե նրանք հրեշներ են, որոնց պետք է շղթայակապել: Նրանց խիղճը հանգիստ էր: Մայիսի 31-ին դեսպան Վանգենհայմը զեկուցում է Բեռլին, թե «Քուրֆիայում տիրող ֆաղափական ու ռազմական վիճակում նշված միջոցառումները կասեցնելը դժբախտաբար անհնար է» ... Հրաշալի բառ է այդ «դժբախտաբար»-ը:

Երեք օր: Եփրատում կուլ գնացածների ունեցվածքը տարան անտեր մնացած սայլերով: Միայն շորորոզ օրը Քեմախի կիրճ ուղարկվեցին 86-րդ հեծյալ ջոկատի զորքերը՝ իբր մարդասպան քրդերին պատժելու համար: Այս «ազնիվ» ջոկատն ավարտեց արյունալի գործը՝ մորթելով այն քիչ մարդկանց, որոնք դեռ կենդանի էին մնացել: Զառիթափերն ու ժայռերը սփռված էին ուռչող դիակներով, որոնք օդը լցնում էին անտանելի գարշահոտությամբ: Երկու բուժքույրեր Երզնկայից պատմում են մի ժանդարմի մասին, որը պարծենում էր, թե ինքն ամեն օր տաս-տասներկու տղամարդ էր սպանում ու շարտում գետը, ճեղքում էր երեխաների գանգերը, որոնք չէին կարողանում փախչել: Ծանապարհին կանայք յուրաքանչյուր գյուղում կրկին բռնաբարվում էին: Այնուհետև գերմանացի բուժքույրերը պատմում են. «Հաջորդ վաղ առավոտյան լսեցինք անցնող մահապարտների աղմուկը... Ողբն ու կոծը աննկարագրելի էր: Դա մի մեծ մարդկային հոտ էր: Շատերը գոռում էին. «Փրկեցե՞ք մեզ: Մենք ուզում ենք դառնալ մուսուլման կամ գերմանացի կամ ինչ ուզում եք, միայն փրկե՞ք մեզ: Հիմա նրանք մեզ կտանեն Քեմախ ու կկտրեն մեր գլուխները...»: Երբ մոտեցանք քաղաքին, տեսանք շատ հեծյալ թուրքերի, որոնք բռնում և տանում էին երեխաներին ու երիտասարդ աղջիկներին: Քաղաքի մուտքի մոտ, որտեղ գտնվում էին նաև գերմանացի բժիշկների տները, հոտը մի պահ կանգ առավ, նախքան Քեմախ ճանապարհվելը: Այստեղ ստրուկների իսկական շուկա էր, միայն այն տարբերությամբ, որ նրանց համար ոչինչ չէին վճարում: Մայրերը ինքնակամ տալիս էին իրենց երեխաներին, և դիմադրությունը չէր էլ օգնի»:

Երբ կարմիր խաչի գթության երկու քույրերը հունիսի 21-ին հեռանում էին Երզնկայից, ճանապարհահին ականատես եղան տեղահանվածների ավելի շատ տատապանքների. «Նրանք լուռ շարժվում էին առաջ, երեխաներն ու մեծահասակները, անգամ շատ ծեր կանայք, որոնց հազիվ էին կարողանում պահել ավանակների վրա: Գնում էին բոլորը, որպեսզի իրար կապված՝ բաթձր ժայռերից չկորսվեն Եփրատի ալիքների մեջ, անեծքի այն հովտում, որը կոչվում է Քեմախ-Բողազի: Մի հույն կառապան մեզ պատմեց, թե ինչպես է դա կատարվել: Նրա պատմությունից մարդու արյունը ջուր էր դառնում: Մեր ժանյարմը հայտնեց, թե ինքը 3000 կանանցից ու երեխաներից բաղկացած մի այդպիսի շարասյուն է տարել Մամախաթունից Քեմախ: «Հեփ գիթտի բիթտի—բոլորին ոչնչացրին»— ասաց նա: Մենք հարցրեցինք. «Եթե ուզում եք նրանց սպանել, ինչո՞ւ դա չեք անում գյուղերում: Ինչո՞ւ եք նրանց սկզբում հասցնում այդպիսի ստորացուցիչ թշվառության»: «Իսկ ո՞ւր պետք է կորցնենք դիակները, չէ՞ որ դրանք գարշահոտություն կտարածեն»,— եղավ պատասխանը:

Մի պահ կանգ առնենք: Հազար տարի առաջ բուլղար ժողովրդի դահիճը՝ Իսազիլիս 2-րդը, հրամայեց հանել 15 000 մարդու աչքերը: 150 հոգու մի աչքը թողեց, որպեսզի նրանք կարողանային իրենց լրիվ անօգնական եղբայրներին վերադարձնել Բուլղարիայի թագավոր Սիմեոնին: Ասում են, թե ռուս զորավար Նվյատտոսյավը հրամայել է ցցին նստեցնել 40 000 մարդու: Սպարտակի խռովարարներից հազարներին Կրասուսը խաչեց: Տիտոսը սարսափելի վայրագություններ արեց գրաված Երուսաղեմում: Ֆրանկհատուզների մոտ, արյունոտ դաշտում, գերմանացի իշխանները սարսափելի ձևով վրեժ լուծեցին պարտված գյուղացիներից: Բայց դա եղել է 2000, 1000, 400 տարի առաջ: Դա հազթողի

վրիժառույթունն էր պարտվածից, դա հաշվեհարդար էր դաժան պատերազմում, այն, ինչ կաններ մյուսը, եթե նա հաղթեր: Դրանք պատերազմական տարիներ էին, երբ մարդը դեռ «ինչ-որ բան արժեր», գոնե այնքան, որ սպաներ կամ սպանվեր: Նա պատերազմի ծառան էր՝ զինվոր, հպատակ, հայրենիքի պաշտպան, մարդ: Սակայն մի ամբողջ ժողովրդի բնաջնջելը՝ կանանց և երեխաներին գիտակցաբար մորթելով, այդպիսի առաջադիմության բարբարոս անցյալը թերևս դեռ չէր «հասունացել»: Պետք է հիշել Պիցցարոյի գազանությունները Պերուում, սպիտակների կործանարար պատերազմը կարմիրների դեմ, «քրիստոնյա» անգլիացիների մարդաորսը Թասմանիայում, Նոր Զելանդիայում, նրանց դաժանությունները անգլո-բուրական պատերազմում, գերմանացիների հետապնդումների հետևանքով հերերոների մահը ծարավից, որպեսզի կարողանանք պատկերացնել, թե ինչ է կատարվել 1915 թվին Քեմախում: Փորձեր են արվում այն բացատրելու արյունարբության, կրոնական ատելության, իշխանատենչության և հիմարության գործոններով: Սակայն ամեն զեպքում այնքան բան անըմբռնելի է մնում, որ 1915 թ. ողբերգությունը թրվում է պատմության ամենարյունալի ու սարսափելի առեղծվածը: Սովորական խելքի համար այն մնում է անլուծելի խնդիր, և դա անտանելի է:

ԽԱՐՎԱՍ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Վերսալի, Սեն Ժերմենի և Սևրի հաշտության պայմանագրերը մինչ այդ ճնշված շատ ժողովուրդների ինքնուրույնություն բերեցին: Լեհաստանը, Զեխուլովակիան, սահմանամերձ պետությունները ազատագրվեցին, Արաբիան և Միդիան անջատվեցին Թուրքիայից: Անգամ հրեաները իրենց հայրենիքը ստացան:

Հայերին խաբեցին: Գերմանիան ոչինչ չարեց թուրք մարդասպաններին խանգարելու համար: Անտանտը դրժեց կենդանի մնացածներին տված իր բոլոր խոստումները: Ֆրիտյոֆ Նանսենը հայերին նվիրված իր հիանալի գիրքը իրավացիորեն վերնագրել է «Խաբված ժողովուրդ»:

Սևրի հաշտության պայմանագրով հայերին խոստացել էին Կովկասում մի բնակավայր, որը պետք է գտնվեր Ազգերի լիգայի պաշտպանության տակ: Պրեզիդենտ Վիլսոնը միջնորդ դատարանի վճռում Հայկական Հանրապետության սահմաններն այնպես էր ներկայացրել, որ ժողովուրդը կարողանար իր մնացորդներին այնտեղ հավաքել և խաղաղ կյանք սկսել 1918 թ. կազմավորված փոքրիկ ռուսահայկական հանրապետության հետ միասին:

Նոր բռնապետ Քեմալ փաշան Թալեաթի և էնվերի արժանի հետևորդն էր: Հենց որ իմացավ, որ 1915 թ. եղեռնավայրը պետք է տրվի խոշտանգված ժողովրդի մնացորդներին, նա հարձակվեց այդ տարածքի վրա: Նույնն արեց Կորհրդային Ռուսաստանը: Ժողովուրդը մնաց առանց հայրենիքի, նույնքան անպաշտպան հետապնդումների դեմ, ինչպես համաշխարհային պատերազմի ժամանակ էր:

Խորամանկ Քեմալ փաշային հաջողվեց Անտանտի մոտ այնպես անցկացնել իր կամքը, որ առաջացրեց մեծ տերությունների փոխադարձ խանդը: Նա օրպես հաղթաթուղթ խաղի մեջ դրեց Մոսուլի նավթաշերտերը: Եվ նավթի պատճառով հայերին խաբեցին իրենց ապագա հույսերում: Քեմալն այնքան ուժեղ էր, որ նույնիսկ 1922 թ. ողջ հույն բնակչությանը՝ 1,5 միլիոն մարդկանց դաժան ձեռով դուրս շարտեց երկրից, պատռեց Սևրի պայմանագիրը և 1923 թ. լողանում հասավ այնպիսի հաշտության պայմանագրի կնքման, որն արդարացնում էր նրա նախկինում կատարած բոլոր գազանությունները:

Նավթն առանձնահատուկ ուժ է: Իսկ ի՞նչ արեց Ազգերի լիգան: Նա երեք

անգամ իրար ետևից միաձայն վճիռ կայացրեց, որ «Բարձր Խորհուրդը պետք է երաշխավորի Հայաստանի ապագան և առաջին հերթին հայերին տրամադրի ազգային հայրենիք»։ Լողանում այդ ամենը արդեն մոռացվել էր։ Լորդ Կերզոնը հայերի ճակատագիրը անվանեց «աշխարհի ամենամեծ խայտառակությունը»։ Քուրթբերի համար միևնույն էր։ Նրանք ոչ մի զիջում չարեցին։ Լոզանի պայմանագրում ոչ մի խոսք չկար հայկական հայրենի հողերի մասին։ Այդ առթիվ Անտանտի մի ներկայացուցիչ ասել է. «Առաջարկվեց լուծումը թողնել Քուրթիայի բարի կամփին»։ Դա հայերի համար նշանակում է բոլոր հույսերի խորտակում։ Եթե Ազգերի լիգան երբևէ իսպառ անհաջողություն է կրել, ապա այս հարցում։ Անգամ անհաջող եղավ ռուսական տարածքում գտնվող փոքրիկ Հայկական Հանրապետությանը վարկ տալու փորձը, որի միջոցներով ստեղծվելու էին բնակություն հաստատելու և աշխատելու հնարավորություններ։

Երբ 1924 թ. Մակդոնալդը անգլիական առաջին նախարարն էր, հակամարտության լիգոններ Ասկվիտը և Բոլդուենը նրան սրտառուչ մի նամակ գրեցին Մեծ Բրիտանիայի պարտականության մասին հայերին օգնելու հարցում։ Մակդոնալդը զահրնկեց արվեց, այնուհետև շորս տարի կառավարեց Բոլդուենը։ Ի՞նչ արեց նա հայերի համար։ ՈՉԻ՞նչ։

1915 թ. թուրքերը ոչ միայն սպանում էին հայերին, այլև կողոպտում նրանց։ Միայն թալանված կարողությունը կանխիկ դրամով հասնում է հարյուրավոր միլիոն ոսկի մարկի։ 1916 թ. թուրքերը այդ գողացված փողից 100 միլիոն ոսկի մարկ ուղարկեցին Բեռլին՝ որպես ավանդ իրենց դրամաթույթի դիմաց։ Այդ ավանդը զինադադարից հետո Անտանտը առգրավեց։ Ի՞նչու այն չեն վերադարձնում կողոպտված ժողովրդին։

Ազգերի լիգան ազնիվ նանսենին առաջարկեց ուսումնասիրելու նպատակով ճանապարհորդություն կատարել Հայաստան։ Նանսենը մեկնում է մեծ դժկամությամբ, որովհետև մեկնում է դատարկ ձեռքերով, հույսը դրած միայն անձնական օգնության վրա։ Նա մոտիկից ծանոթանում է փոքրիկ ռուսահայկական հանրապետության կյանքի պայմաններին, ուսումնասիրում է հնարավորությունները, որոնց օգնությամբ աղքատ պետությունը ի վիճակի կլիներ ընդունել աշխարհով մեկ թափառող շատ փախստականներին։ Նանսենն առաջարկում է Ազգերի լիգային Հայաստանին վարկ տալ։

Ի՞նչ է անում Ազգերի լիգան։ Շտրեկեմանը գովում է նանսենին ջանքերի համար։ Չեմբերլենը (Բոլդուենի արտաքին գործերի նախարարը) համարյա արտասովելու շափ հուզված է հայերի ճակատագրի համար, սակայն... նա հրահանգներ չունի և չէր ուզե՞նա գուր հույսեր տալ...

Գրող, քանաստեղծ Արմին Քեոփիլ Վեգների ոգեշունչ կոչը, որը նա 1919 թ. ուղղել էր Վիլսոնին, վաղուց մոռացվել է։

Այդպիսին են այդ պարոնները, որոնք իրենց ակումբը կոչում են Ազգերի լիգա։ Եթե մեծ հարցերում (զինաթափում) հասնում են փայլուն հաջողության, ապա փոքր պրոբլեմների լուծման համար ժամանակ չունեն։ Եվ մի փոքր ժողովրդի կյանքը կամ մահը մանրուք է, առավել ևս, որ այդ ժողովուրդը հիմարություն է ունեցել ոսկու հանքերի և նավթի դաշտերի տերը չլինելու։

Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում ասում է. «Դո՛ւ՛՛ ֆաղաֆագետե՛՛ր, դո՛ւ՛՛ պետական այրե՛՛ր, հանգիստ թողե՛՛ք ձեր բարձրագույն խոսքերը, մի խլե՛՛ք մարդկանցից իրենց հույսի վերջին կաթիլը, ֆանի ու հույսը, հակառակ ամեն ինչի, ժողովրդի պատմության մեջ սրբություն է»։

армянскому геноциду. Она впервые вышла в свет в 1930 г. в Германии и выдержала еще два издания (последнее—в 1987 г.). На русский язык книга была переведена автором статьи в 1991 г. и опубликована издательством Академии наук Армении.

Повествование Г. Фирбюхера достоверно, ибо его автор—очевидец событий геноцида армян в Турции в период первой мировой войны. В этой небольшой книге (25 глав) автор правдиво описал чудовищное истребление целого народа, выявив причины и виновников этой страшной трагедии, Фирбюхер открыто и аргументированно разоблачает коварную и преступную политику великих держав в вопросе геноцида армян, неопровержимыми фактами доказывает, что непосредственным организатором истребления армянского народа является младотурецкое правительство, а кайзеровское правительство Германии—его преступный сообщник. Книга Г. Фирбюхера является серьезной пощечиной современным турецким фальсификаторам истории геноцида армян и их отдельным собратьям по перу на Западе, которые стараются свалить вину на жертв геноцида и отрицать сам факт истребления армянского народа. К работе приложен перевод двух глав из этой книги—«Чертово ущелье» и «Обманутый народ».